

Պատասխան

Համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշման՝ բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում ընդգրկված անձանց հատուկ և դժվարամատչելի հետազոտությունների անհրաժեշտության դեպքում, այդ թվում նաև կոմայուտերային տոմոգրաֆիայի, մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի համար ուղեգրումները, իրականացվում են այն բուժհաստատության կողմից, որտեղ բուժվում և/կամ կոնսուլտացիայի է ենթարկվում հիվանդը՝ բուժհաստատության կողմից և/կամ մասնագիտացված դիսպանսերների կողմից տրված ուղեգրի հիման վրա, ուղեգրի հետ ներկայացնելով համապատասխան սոցիալական կարգավիճակը հաստատող փաստաթուղթը: